Աննա Էսպարսա

Աննա Էսպարսա – պատմաբան, մշակութաբան, PhD (Իտալիա, Հռոմի Լա Սապիենցա համալսարան): «Ռուս գրականություն: Պատմություն և արդիականություն», «Միխայիլ Լերմոնտովը և ռուսական ռոմանտիզմը» միջազգային գրական ցուցադրությունների ղեկավարն է: Մոսկվայի պետական համալսարանի (ՄՊՀ) պատմության ֆակուլտետի շրջանավարտ է (2010): 2009-2013 թվականներին գլխավորել է պատմության ֆակուլտետի՝ իր իսկ կողմից ստեղծված «Պատմության և ակադեմիական գիտության հանրայնացման բաժինը»:

Եղել է Էդվարդ Ռաձինսկու հեռուստատեսային փաստագրական հաղորդումների համահեղինակն ու ավագ խմբագիրը, մոսկովյան ու միջազգային փառատոների ու ցուցահանդեսների հղացքների հեղինակ և պատմության գծով խորհրդատու: 2014-2015 թվականներին եղել է «BBC» ընկերության «Կուզեններ» սերիալի և Սթիվեն Սիգալի «Լենին» ֆիլմի պատմության գծով խորհրդատուն:

2018 թվականից ՌԴ Լուսավորության նախարարության մշտական աշխատակից է և հեղինակել է մի շարք լուսավորչական ֆիլմեր Ռուսաստանի մշակույթի գործիչների և պատմության մասին: «Մոսկվայի առանձնատներ» փաստագրական ծրագրի, ՌԴ Արտգործնախարարության համար նախատեսված «Ռուսական դիվանագիտության դիմանկարներ» գիտահանրամատչելի ֆիլմերի հեղինակն է:

2022 թվականից դարձել է Թարգմանության ինստիտուտի «Երիտասարդ թարգմանչի դպրոց» ստեղծագործական ծրագրի տնօրենը: Հրավիրյալ դասախոս է Հռոմի համալսարանում, Փարիզի Պանթեոն-Սորբոնում, Բրյուսելի ազատ համալսարանում, Գրանադայի համալսարանում, Բուդապեշտի համալսարանում, Հունգարական Լակիտելեկ քաղաքի Միջազգային թարգմանական ճամբարում: Փարիզի «Ռուսական գրքի օրերի» կազմկոմիտեի անդամ է: «Նապոլեոնյան պատերազմներ» (2012) քրեստոմատիայի համահեղինակն է, «Դարի հերոսներ և գաղտնիքներ: Փարիզի չհրատարակված արխիվներ» (2018) գրքերի շարքի խմբագիրն է, ինպես նաև «Ապագայի ներկան. Երկխոսություններ կրթության մասին» (2020) գրքի խմբագիրը:

Ապրում է Մոսկվայում:

READ RUSSIA

YEREVAN BOOK FEST 2025

КНИГИ ИЗ РОССИИ
ԳՐՔԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

ИНСТИТУТ ПЕРЕВОДА
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ